# ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ ԹԻՎ 15, 16-Ն, 17-Ա, 18-Ա ԵՎ 19 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 15 որոշման մեջ «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արևշատ համայնքի ավագանու անդամներ» գրառման դիմաց նշված է «կողմ 5», սակայն առկա է ավագանու անդամների 6 ստորագրություն: Անհրաժեշտ է կողմ բառից հետո նշված «5» թիվը փոխարինել «6» թվով:

Թիվ 16-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի և 7-րդ կետի դրույթները սխալ են համարակալված: Բացի այդ, 7.1 կետում հարկավոր է կիրառել «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված վճարներից միայն մեկը:

Թիվ 17-Ա որոշման 1-ին կետում նշված «2019» թիվը փոխարինել «2020» թվով:

Թիվ 18-Ա որոշման 3-րդ կետում ուժը կորցրած ճանաչվող իրավական ակտի վերնագրում նշված «2018» թիվը փոխարինել «2019» թվով:

Թիվ 19 որոշման բովանդակության մեջ չի գրառվել 2019 թվականին իրականացված գույքագրման օրն ու ամիսը:

*Կատարող՝ Ն.Մարտիրոսյան*
*22.01.2020թ.*